Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

ՈՐՈՇԵՑ

1. Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարել՝ թիվ ԵԴ/12976/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 07.07.2023թ. վճիռը բեկանել և փոփոխել.

1.1. «ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 27.12.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը, մերժել:

1.2. Դատական ծախսերի հարցը առաջին ատյանի դատարանում համարել լուծված:

1.3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 16.05.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

2. «ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ն.ԲԱՐՍԵՂՅԱՆ	Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Նախագահող դատավոր՝ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ